**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ**

---

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9(2)

**15 հոկտեմբերի 2025 թվական**

**ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ**

**ՀԵՐԹԱԿԱՆ ԹԻՎ 2 ՆԻՍՏԻ**

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 23 անդամներ:

Բացակա են՝ Գառնիկ Սահակյանը, Սահակ Բաղդասարյանը, Գարիկ Պալյանը, Զարուհի Կարապետյանը:

**<u>Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝</u>**

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ս.Վարդանյանը, համայնքի ղեկավարի գլխ.խորհրդական Վ.Չիլինգարյանը, աշխատակազմի քարտուղար Ս.Մուրադյանը, համայնքապետարանի աշխատակազմի բաժինների պետերը և համայնքի վարչական ղեկավարները:

**Նիստը վարում էր Չարենցավան համայնքի ղեկավար՝ Հակոբ Շահգալդյանը**

<u>ԼՍԵՑԻՆ</u>

***ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԹԻՎ 2 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ՍՈՒՐԵՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ և 62-րդ հոդվածների դրույթներով. Չարենցավան համայնքի ավագանին *որոշում է.*

1. Հաստատել Չարենցավան համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի հերթական թիվ 2 նիստի օրակարգը՝

1) Չարենցավան համայնքի 2025 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականի մասին:
2) Չարենցավան համայնքի 2025 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին:
3) Չարենցավան համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 111-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

4) Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածից գումար հատկացնելու մասին:
5) Սեփականության իրավունքով «ՊՐԵՄԻՈՒՄ ՌԱԿ» ՍՊԸ-ին պատկանող հողատարածքի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության թույլտվություն տալու մասին:
6) Սեփականության իրավունքով «ՌԱԿ ՊՐՈԴՈՒԿՏ» ՍՊԸ-ին պատկանող հողատարածքի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության թույլտվություն տալու մասին:
7) Սեփականության իրավունքով Անդրանիկ Սիլանյանին պատկանող հողատարածքի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության թույլտվություն տալու մասին:
8) Վարձակալության իրավունքով Վաղարշակ Վարդանյանին տրամադրված հողատարածքը ենթավարձակալությամբ տրամադրելու թույլտվություն տալու մասին:
9) «ԼԱՊԻՍ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ-ի կողմից նախատեսվող Գյումուշի բազալտի հանքավայրից արդյունահանված հանքանյութի վերամշակման աշխատանքներին համաձայնություն տալու մասին:
10) Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի հերթական թիվ 3 նիստի գումարման օրը սահմանելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

***<u>Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան՝</u>***

Քվեարկության եմ դնում որոշումը:

**Կողմ-23 դեմ-0 ձեռնպահ-0**

***Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:***

***<u>ԼՍԵՑԻՆ</u>***

***1. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ:***

***(Զեկ. ԳԱՅԱՆԵ ԱՖՅԱՆ)***

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի, Չարենցավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Ի գիտություն ընդունել Չարենցավան համայնքի 2025 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականի մասին համայնքի ղեկավարի հաղորդումները (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու Ֆինանսաբյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Համայնքի ավագանու Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ Լ.Հարոյանը հարց բարձրացրեց գերեզմանատան ճանապարհի վերանորոգման վերաբերյալ:
Համայնքի ղեկավար Հ Շահգալդյանը պատասխանեց, որ խնդրի կարգավորման նպատակով 2026 թվականի համայնքի բյուջեում կհատկացվի համապատասխան գումար:

Ավագանու անդամ Դ.Պապոյանը հարցրեց համայնքի ավտոմեքենաների աճուրդային վաճառքի մասին, աշխատակազմի քարտուղար Ս.Մուրադյանը տվեց պարզաբանումներ աճուրդային կարգի վերաբերյալ:

*<u>Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան՝</u>*

Քվեարկության եմ դնում որոշումը:

**Կողմ- 15 դեմ-8 ձեռնպահ-0**

*Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

*2. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:*

*(Զեկ. ԳԱՅԱՆԵ ԱՖՅԱՆ)*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 90-րդ հոդվածով, «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներով, Չարենցավան համայնքի ավագանին *որոշում է.*

1. *ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ <u>17489,19</u> ՀԱԶ. ԴՐԱՄ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼ՝*

| Բաժին | Խումբ | Դաս | Ծրագրի անվանումը | Հոդվածի NN | Ընդամենը | Բյուջեի ավելացում | | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | Վարչ. մաս | Ֆոնդ. մաս | |
| 01 | 6 | 1 | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ /այլ դասերին չպատկանող/ | 4819 | 0 | 1000,0 | 0 | 1000,0 |
| 05 | 6 | 1 | Շրջակա միջավայրի պաշտպ. | 4521 | 1788,0 | 4106,0 | 0 | 5894,0 |
| 08 | 6 | 1 | Հանգիստ, մշակույթ և կրոն /այլ դասերին չպատկանող/ | 4657 | 0 | 10595,19 | 0 | 10595,19 |
| 11 | 1 | 2 | Պահուստային ֆոնդ | 4891 | 106822,944 | -17489,19 | 0 | 89333,754 |

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու Ֆինանսաբյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

*Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան՝*

Քվեարկության եմ դնում որոշումը:

**Կողմ-23 դեմ-0 ձեռնպահ-0**

*Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:*

ԼՍԵՑԻՆ

***3. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի ԹԻՎ 111-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:***

***(Զեկ. ԳԱՅԱՆԵ ԱՖՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-34-րդ հոդվածներով, Չարենցավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Չարենցավան համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 20-ի «Չարենցավան համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 111-Ն որոշման հավելվածի N 1-6 հատվածներում կատարել փոփոխություններ՝

/հազ. դրամ/

| Բաժին | Խումբ | Դաս | Ծրագրի անվանումը | Հոդվածի NN | Ընդամենը | Բյուջեի ավելացում | | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | Վարչ. մաս | Ֆոնդ. մաս | |
| 08 | 2 | 4 | Այլ մշակութային կազմակերպություններ | 4269 | 22390,0 | -17160,0 | 0 | 5230,0 |
| | | | | 4239 | 12000,0 | 17160,0 | 0 | 29160,0 |

2. Թույլատրել գնումները կատարել Հայաստանի Հանրապետության «Գնումների մասին» օրենքի համաձայն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու Ֆինանսաբյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

*<u>Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան՝</u>*

Քվեարկության եմ դնում որոշումը:

**Կողմ-23 դեմ-0 ձեռնպահ-0**

*Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

*4. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ԱՅԼ ԴԱՍԵՐԻՆ ՉՊԱՏԿԱՆՈՂ) ՀԱՏՎԱԾԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:*

*/Զեկ. ԱՐՄԻՆԵ ՁԱՔԱՐՅԱՆ/*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հաշվի առնելով Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի 6-րդ թաղամասի 7-րդ շենքի 7-րդ բնակարանի բնակիչ Աշոտ Աղաջանյանի 2025 թվականի հոկտեմբերիի 03-ի թիվ 4853-16, Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի 3-րդ

թաղամասի 38-րդ շենքի 7-րդ բնակարանի բնակիչ Հերմինե Մանուկյանի 2025 թվականի հոկտեմբերի 01-ի թիվ 4792-16, Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի 6-րդ թաղամասի 11-րդ շենքի 6-րդ բնակարանի բնակիչ Արմինե Սաֆարյանի 2025 թվականի հոկտեմբերի 07-ի թիվ 4865-16 և Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի 8-րդ թաղամասի 25-րդ շենքի 27-րդ բնակարանի բնակիչ Վարդիշաղ Հակոբյանի 2025 թվականի հոկտեմբերի 13-ի թիվ 4926-16 դիմումները ֆինանսական աջակցություն հատկացնելու մասին, Չարենցավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 200.0 հազ. դրամ հատկացնել **Աշոտ Նորիկի Աղաջանյանին:**
2. Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 200.0 հազ. դրամ հատկացնել **Հերմինե Գեղամի Մանուկյանին :**
3. Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 200.0 հազ. դրամ հատկացնել **Արմինե Մայիսի Սաֆարյանին:**
4. Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 200.0 հազ. դրամ հատկացնել **Վարդիշաղ Համբարձումի Հակոբյանին:**
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու Կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Քվեարկության եմ դնում որոշումը:

**կողմ-23 դեմ-0 ձեռնպահ-0**

***Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:***

**<u>ԼՍԵՑԻՆ</u>**

***5. ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ «ՊՐԵՄԻՈՒՄ ՌԱԿ» ՍՊԸ-ԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ:***

***(Զեկ. ԲԵՆԻԿ ԲԱԼԲԱԲՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ կետի դրույթներով և հաշվի առնելով «ՊՐԵՄԻՈՒՄ ՌԱԿ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած ճարտարապետահատակագծային առաջադրանքի հայտը, Չարենցավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Սեփականության իրավունքով ***«ՊՐԵՄԻՈՒՄ ՌԱԿ» ՍՊԸ-ին*** պատկանող 07-067-0005-0019 ծածկագրով 0.89176 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության արոտավայրի նպատակային և գործառնական նշանակությունը փոխել որպես արդյունաբերության ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների նպատակային նշանակության գյուղատնտեսական արտադրական գործառնական նշանակության հողատեսքի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու Քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության և ենթակառուցվածքների մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

***<u>Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան՝</u>***

Քվեարկության եմ դնում որոշումը:

**Կողմ- 23 դեմ-0 ձեռնպահ-0**

***Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:***

Ելույթի իրավունք խնդրեց Ֆինանսատնտեսագիտական և գնումների կազմակերպման բաժնի պետ Գ.Աֆյանը և լրացում արեց «Չարենցավան համայնքի 2025 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին» նախագծում՝ նշելով, քանի որ ՄԱԿ-ի զարգացման ծրագրի կողմից իրականացվող և Ճապոնիայի կառավարության ֆինանսավորմամբ «Լեռնային Ղարաբաղից տեղահանված անձանց և ընդունող համայնքների հիմնական ենթակառուցվածքների և սոցիալական ինտեգրման աջակցության» ծրագրի շրջանակներում Չարենցավանի համայնքապետարանը մասնակցել է դրամաշնորհային մրցույթի և ճանաչվել հաղթող, վերանորոգվելու և նոր խաղասարքերով համալրվելու է Չարենցավանի 3-րդ թաղամասի 8-րդ և 9-րդ շենքերի հանդիպակաց խաղահրապարակը: Ծրագիրը ենթադրում է համաֆինանսավորում 10.595.190 դրամի չափով: Առաջարկությունը անցավ միաձայն: Որոշումը ստորագրման կներկայացվի արդեն լրացված և փոփոխված տարբերակով:

**<u>ԼՍԵՑԻՆ</u>**

***6. ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ «ՌԱԿ ՊՐՈԴՈՒԿՏ» ՍՊԸ-ԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ:***

***(Զեկ. ԲԵՆԻԿ ԲԱԼԲԱԲՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ կետի դրույթներով և հաշվի առնելով «ՌԱԿ ՊՐՈԴՈՒԿՏ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած ճարտարապետահատակագծային առաջադրանքի հայտը, Չարենցավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Սեփականության իրավունքով ***«ՌԱԿ ՊՐՈԴՈՒԿՏ» ՍՊԸ-ին*** պատկանող 07-067-0005-0021 ծածկագրով 1.00616 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության արոտավայրի նպատակային և գործառնական նշանակությունը փոխել որպես արդյունաբերության ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների նպատակային նշանակության գյուղատնտեսական արտադրական գործառնական նշանակության հողատեսքի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու Քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության և ենթակառուցվածքների մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

***Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան՝***

Քվեարկության եմ դնում որոշումը:

**Կողմ- 23 դեմ-0 ձեռնպահ-0**

*Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:*

LՍԵՑԻՆ

### *7. ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆԴՐԱՆԻԿ ՍԻԼԱՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ:*

*(Զեկ. ԲԵՆԻԿ ԲԱԼԲԱԲՅԱՆ)*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ կետի դրույթներով և հաշվի առնելով Անդրանիկ Սիլանյանի կողմից ներկայացրած ճարտարապետահատակագծային առաջադրանքի հայտը, Չարենցավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Սեփականության իրավունքով ***Անդրանիկ Սիլանյանին*** պատկանող 07-015-0168-0065 ծածկագրով 0.8159 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողի նպատակային և գործառնական նշանակությունը փոխել որպես արդյունաբերության ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների նպատակային նշանակության գյուղատնտեսական արտադրական գործառնական նշանակության հողատեսքի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու Քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության և ենթակառուցվածքների մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

*Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան՝*

Քվեարկության եմ դնում որոշումը:

**Կողմ- 23 դեմ-0 ձեռնպահ-0**

*Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:*

*ԼՍԵՑԻՆ*

*8. ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՎԱՂԱՐՇԱԿ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ԵՆԹԱՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ:*

*(Զեկ. ԲԵՆԻԿ ԲԱԼԲԱԲՅԱՆ)*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով Վ.Վարդանյանի 08.09.2025թ. թիվ 4296/07 դիմումը, Չարենցավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Թույլատրել վարձակալության իրավունքով ***Վաղարշակ Վարդանյանին*** տրամադրված 07-008-0026-0033 ծածկագրով՝ Չարենցավան համայնք գյուղ Ալափարս փողոց 22 թիվ 44 հողամասը նույն պայմաններով տրամադրելու ենթավարձակալությամբ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու Քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության և ենթակառուցվածքների մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

*Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան՝*

Քվեարկության եմ դնում որոշումը:

**Կողմ- 23 դեմ- 0 ձեռնպահ- 0**

*Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:*

ԼՍԵՑԻՆ.

**9. «ԼԱՊԻՍ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ-Ի ԿՈՂՄԻՑ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՅՈՒՄՈՒՇԻ ԲԱԶԱԼՏԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻՑ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՎԱԾ ՀԱՆՔԱՆՅՈՒԹԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

*(Զեկ. ՍԱԹԵՆԻԿ ԲԱԼԱԲԵԿՅԱՆ)*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 16-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, ՀՀ կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման 28-րդ կետի, Չարենցավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Տալ նախնական համաձայնություն ***«Լապիս մայնինգ» ՍՊԸ-ի*** կողմից նախատեսվող Գյումուշի բազալտի հանքավայրից արդյունահանված հանքանյութի վերամշակման աշխատանքներին:
2. Սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունն ու տեսագրությունը օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու Քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության և ենթակառուցվածքների մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

***Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան՝***

Քվեարկության եմ դնում որոշումը:

**Կողմ-23** **դեմ- 0** **ձեռնպահ- 0**

*Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:*

ԼՍԵՑԻՆ

***10. ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԹԻՎ 3 ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*/Զեկ ՍՈՒՐԵՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ/*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով Չարենցավան համայնքի ավագանին՝ ***որոշում է.***

1. Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի հերթական, թիվ 3 նիստի օր և ժամը սահմանել 2025 թվականի նոյեմբերի 14-ը, ժամը 12:00:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

*Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան՝*

Քվեարկության եմ դնում որոշումը:

**Կողմ- 23** **դեմ-0** **ձեռնպահ- 0**

*Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:*

Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Ա. Գալստյանը խոսեց Չարենցի հուշասրահի վերաբացման մասին, հայտնելով իր գոհունակությունը, միաժամանակ նշեց Չարենցի արձանի վերանորոգման անհրաժեշտության մասին, որի շուրջ ծավալվեց աշխատանքային քննարկում:

***Չարենցավան համայնքի ավագանու անդամներ՝***

Առաքելյան Նորայր
Բաբայան Արայիկ
Բաբայան Նարեկ
Գալստյան Արթուր
Գևորգյան Գևորգ
Դավթյան Կարեն
Եփրեմյան Բաբկեն
Եփրեմյան Տարոն
Թադևոսյան Նունե
Խաչատրյան Արշակ
Հարոյան Լիլիթ
Ղամբարյան Գարիկ
Մալխասյան Նորիկ
Մակինյան Վարդան
Մուքայելյան Վալերի
Շահգալդյան Հակոբ
Պապոյան Դավիթ
Պետրոսյան Ավետիք
Պողոսյան Մնացական
Վարդանյանը Նորիկ
Վարդանյան Նորայր
Վարդանյան Սարգիս
Վարդանյան Սևակ

*Նիստն արձանագրեց Ս.Մուրադյան*-------------------

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ